

ՐԱԺԱՆՈՐՂԱԳՐՈՒԹԻՒՆ
 Հուլիսից համար 10 Ֆր.
 Տարեկան 5 »
 Արտատպանի համար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻՅԱՆ ՎՃԱՐՆԵՒԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չեւ տրուիր
 —)(—
 Իրականացան տողք 20 սան-
 քիւն է. երեկեւ աւելի սան-
 քանկերու համար 20 010
 գեղջ կրուայ:

ՇԱԲԱԹ

համակ է քրտն քրկն
 Խաղաղութեան հասցիին.

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԻՈՒ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
 АДВОКАТЪ

W. H. (Rafael)
Stomne (Rafael)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—)(—
 Բ.

Եթէ Ռուսիոյ ու Անգլիոյ հետ մեր արտաքին աշխարհազարու-
 թիւնը ասանկ աննպատ պայ-
 մաններու տակ կը ներկայանայ,
 ըսելէ բնա յոյս չիկայ որ Գեր-
 մանիոյ շնորհաշուք վեհապետին
 և Աւստրիոյ օտարկանապետ կայ-
 սեր հետ ներկայակցութիւն մը յա-
 ջողի ու մենք թօթափենք թուր-
 քին անհանդուրժելի լուծք:

Ուստի ուղենք չուղենք պիտի
 մէկդի թողունք մեր արտաքին
 քաղաքական ուղղութիւնը, ականջ
 չկալելով աս մասին եղած
 թերուզէմ յորդորներուն, որոնք
 փրկարար ըլլալէ շատ հետո՛ւ կո-
 ըրտաբեր միայն կրնան ըլլալ
 մեզ համար, ու պիտի փարինք
 ինքնօգնութեան մեծ քաղաքա-
 կանութեանը:

Եթէ մեր կաղմած ու պատրաս-
 տած յեղափոխութիւնը իր յորդ
 ու բուռն ժայթքումներուն մէջ
 ապարդիւն մնայ կամ, ասնկ ը-
 սենք, ակնկալուած արդիւնքը
 չտուաւ, պատճառը զլրատարա-
 պէս որոնելու ենք մեր այն միւլե-
 գին յամառութեանը մէջ որով
 մեր ամէն մէկ յառաջխաղաց
 շարժումին հետեւող կարծեցիկը
 անգլիացին և ուսը, ու ան-
 խախտ հաւատացինք որ մեր
 պայթեցում մէկ արտաճանախին
 պիտի յաջորդէ ալպիոնեան
 մարտանաւերուն հրամայներուն
 որտու՛մը Չանաղ Գալէի ներու-
 ցին մէջ կամ խաղախնեւ լեզե-
 սնեւրուն յարձակումը էրզրումի

զաշտափայլը: Ընդհանուր հան-
 դարտութեան մէջ մեծաշախնդ-
 պայթեցան հայկական հրաշէնը
 կամ ուսմբերը, ու յետոյ ամէն-
 քը լուցին, ու աս լուծեան
 մէջ արեան աղբիւրներու քա-
 մնելի շշուղը միայն լուսեցաւ:

Այսպէս, օտարին համակրու-
 թեանը և աշակցութեանը վրայ
 խարսխուած յեղափոխութիւն մը
 վըլլած էր թուալզլոր քայքա-
 յումով:

Մեր յեղափոխական առաջին

շրջանի աս կաղմակերպութեան
 վրայ խօսելով, միտքս բնա վար
 զարնել չէ զայն: Եւր սկսուած
 կամ նոր փորձի ենթարկուած
 դորձէ մը անթերի կատարելու-
 թիւն չի պահանջուիր անշուշտ,
 և անոնք որ կելլան վայրագօրէն
 կը դատապարտեն մեր յեղա-
 փոխութեան ասալին շարժում-
 ները, թանձրամիտ ազէտներ
 են կամ ազգադաւ շահախնդիր-
 ներ:

Մինակ, անցեալին դառն
 փորձառութիւնները հարկ է որ
 շահագործենք ու մեր ապագայ
 դորձուհեութեան ծրագիրները
 անոնց վրայ չպիտիք ձեւենք:

Չենք կրնար ունենալ քաղա-
 քական ուղղութիւն ան իմաստով
 որով մինչև ցարք քարոզուեցաւ
 մեզ. և ալ ևս չպիտի ունենանք:
 Ան ժամանակը, աշխատութիւնը,
 զոհողութիւնը, զոր պիտի յա-
 կացնենք օտար կառավարու-
 թեան մը համակրանքը վաստկե-
 լու յետնադէպ զապարտին ի-
 լադորձմանը, կենսական տարբե-
 րը պիտի կաղմն մեր ներքին
 կաղմակերպութեան ուժովնա-
 լուն, ամբարշտութիւնը:

Ու այլ ևս փոխանակ մտա-
 ցածին յոյսերու ետեւէ վաղվը-
 լու, սպանիական ոսկեզօծ դը-
 եակներու կառուցման զոհելու
 մեր ամէնէն պէտքեւ կարողու-
 թիւնները, պիտի պարփակուինք
 լուիկ, անսուր ինքնամոխիման
 մը մէջ, վիճակի անայլայլ դի-
 տակցութեամբ շարժելու և մեր
 առնելիք քայլերուն հարթու-
 ցիլ ճամբայ յարգարելու հա-
 մար:

Այսպէս, մէկ կողմէ ներքնա-
 պէս շղարկուելով, միւս կողմէ
 արկուսի սրտաւետութեամբ հետե-
 լելով ան երեւելիներուն ու դար-
 ձուածքներուն զորս ներկայ քա-
 ղաքականութիւնը կատանայ ան-
 դադրում, սլաւահարգին առիթը
 պիտի բռնենք ու ծառայեցնենք
 մեր շարժարտած ու անհունապէս
 երկարաձգուած դատին սուշտա-
 նութեանը:

Հիմակ, կը հարցնենք. այս-
 պէս վարուելը բանաւոր ու օգ-
 տակար է թէ ոչ անգլիացիին

կամ ուստին փէշերուն տակ քաշ-
 կուտուիլը:

Ընթերցողը թող դատէ:
 ՇԱԲԱԹ

Հ Ր Ա Վ Ե Շ Տ

—)(—

Այ մի՛ գրեւ ինձ սիրային խօս-
 քեր.

Անոնք ինձ համար բոլոր բուսքեր.
 Չր գիտե՛ս որ ևս ա՛յ չեմ հաւատար.
 Անոնք չոկ կեղծիք են սրբօրն հա-
 մար:

Բաւ չե՛ք ինձ որքան սիրեցի իւն-
 ղով.

Սիրոյ զոնկէ իմ սիրս ու գորով.
 Միտք չի ու՛ր ինձ ինչ ունեկի,
 եւ այլ անկեր փոխան ոչընչի:

Թարմ հասակի մեջ ինձ սիրեցի
 միշտ.

Ինչ կես բաժնեցի բոլոր ինչն ու
 վիշտ,
 Ինչ պարտեցայ սրբօրն ու
 քեզ.

Այ ոչինչ կրեմաւ. վըրայ ինձ ա-
 լու:

Հին յիշատակներ մի՛ յուզեր իմ
 ֆով.

Թող այն զգացումնք մընակ անգլի-
 ցով.
 Անոնք մոռցուած են վաղուց ար-
 ցին.

Թող մոռացութեան մեջ քայտի ա-
 լեկն.

Սիրս երբեմն հարուստ ինձով,
 այժմ աղքատ.

Սիրովդ ձեռնած, բայց չեմ յուս-
 փաս.

Եւր գեկնով ևս նոր կրքընեմ ճաւ-
 ղայ.

Ուր գիցի՛ք, ապաշաւ, սքսոթիւն ջը-
 կայ:

Հիմա ևս ունիմ սարքեր սիրուի.
 Սիրուած անկեմն, անեմն զիշտի.
 Անոր ևս կուտաւ իմ կեանքս և իմ
 ուժ.

—Հայրենիք, զո՛ւ ևս սիրուիս ա-
 ճուշ:

ԼԵՒՈՒ ՄԻՆԱՍԵԱՆ

Չորեքշաբթի օրը չկրցինք Շա-
 ժուրը հրատարակել մեր միակ գրա-
 շարին անակնկալ հիւանդութեան
 պատճառովը: Անոր փոխարէն կը
 իտատանաք առաջիկային զրոկան
 յաւելուած մը հրատարակել:

—)(—

ՕՐԸ ՕՐԻՆ

Պ. ՍԱՊԱՆ-ԳԻՒԼԵԱՆ

—)(—

Ազգական վարժարանին կողմը Ֆը-
 րանսերէնի դասով մը զբաղած է երբ
 կերթամ տեսնելու Ռուսչուքի հայ
 վարժարաններուն Տնօրէնը. Սրամիտ
 աչքերով, բաց ճակատով, գանգրա-
 ներ, միջանասակ, եւ զիրուկ կովկաս-
 ցի մը, որ իր սեւ հագուստներուն եւ
 հանգիստոր զիրքին մէջ բողբոջ-
 կան միտիտարի մը և կամ ակադե-
 մականի մը տպաւորութիւնը կը
 թողու վրաս: Պ. Սապան-Գիւլեան
 յանկուցիլ խօսակցութիւն մը ունի
 զոր շահեկան մանրամասնութիւննե-
 րով կը համեմէ: Իր գաղափարները
 կը սիրեն միշտ դառնալ հայ կեան-
 քի, դատարարական եւ յեղա-
 փոխութեան խնդիրներու շուրջը,
 որոնց վրայ ընդարձակ տեղեկու-
 թիւններ ունի: Ամէն ճշմարիտ հա-
 յու պէս ինք ալ կը ցաւի այն հա-
 կայեղափոխական հոսանքին վրայ
 զոր կարգ մը ժանգոտած արարածներ
 կը ջանան մացնել զիւրախարներու
 մէջ «միտութեան» պատրուակին տակ:

Իրբև Բարիզի հայ ուսանողաց ըն-
 կերութեան նախագահ՝ ազգային դա-
 ւաբ ու տառապանքները Ֆրանսաց-
 ւոց ծանօթացնելու համար աշխա-
 տութիւն չէ խնայած. երեւելի անձ-
 նաւորութիւններու հետ ունեցած
 յարաբերութիւններուն շնորհիւ,
 կարեւոր մասնակցութիւն մը ունե-
 ցած է Բարիզի վերջին հայասէր շար-
 ժումներուն եւ միթիոններու կազ-
 մակերպութեան գործին մէջ: Տարի
 մըն է որ Բարիզի քաղաքական
 գիտութեանց այս աշակերտը Ռուս-
 չուք հրախրուած է հայ դպրոցնե-
 րը վարելու. և ինք սիրայօժար ըս-
 տանձնած է այս պաշտօնը, Բարիզի
 եռուղեպետ կեանքէն ետքը, վանա-
 կանի կեանքով ապրելու, ինքզին-
 քը բոլորովին նուիրած հայ մանկը-
 արին կրթութեան գործին: Իր եր-
 կաթէ կազմը շարժական 36 դա-
 սեր ստանձնել կը ներէ իրեն. և
 իր այս բազմազգալ վիճակին մէջ
 ժամանակ գտած է նոր պրօջեւո մը
 պատրաստել. «Հայկական խնդիրը
 Պերլինի գաշնագրէն ետքը», որ լոյս
 պիտի տանայ մօտերս և անշուշտ
 մեծ շահեկանութեամբ պիտի կար-
 դացուի: Չմոռնամ յիշել նաեւ թէ
 երբեմն հրատարակային դասախօսու-
 թիւններ ալ կընէ տեղւոյն երկտա-
 սարդութեան զարգացմանը նպաստե-
 լու համար:

Ասանց մօտէն ճանչնալու Պ. Սա-

պահ-Ֆիլիշեանի բնական կարողութիւնը, որուն մասին գովեալով կը խօսուի, կրնամ հաստատել թէ լաւ ուսուցանող մըն է, որ ոչ խօսք եւ ոչ բացատրութիւն չի խնայեր իր դասերը ըմբռնելի հանդիսացնելու համար: Հայերէնի դաս մը որուն ներկայ գտնուեցայ, զիս համոզեց թէ աղաք օգտուած են իրմէն: Գասախօսութիւնը այնպէս էր ինչպէս ես կը սիրեմ. ոգեւորուած, լայն եւ բազմակողմանի. մէկ բառով շահեկան նիստ մը ինչպէս պէտք է ըլլայ ամէն դասախօսութիւն: Աշակերտները թուով հետեւին. յայտնի էր: Եւ յետոյ, քանի մը արտասանութիւններ ըրին որոնց վրայ սքանչուցայ: Ըսածներէս ետքը, ընթերցողը անշուշտ պիտի հետեւցնէ թէ Ռուս-չուքցին հոգի կուտայ իր Տնօրէնին վրայ. մանաւանդ երբ խորհի թէ շատ անկանոն կերպով կը վճարէ թէ՛ իրեն եւ թէ՛ ըրոր ուսուցիչներուն: Գծարարաբար իրողութիւնը բոլորովին ներհակն է:

Սուր հակառակութիւն մը կայ իրեն դէմ, իր բուն եւ գիւրբարբօք նկարագրին պատճառով, որ երբեմն, կը հաւաստեն թէ՛ շատ կծու կերպով կարտայայտուի եւ ցաւալի սեւաբաններու տեղի կուտայ:

Հասարակութեան մէկ մասը հեռի է գնահատել իր աշխատութիւնը եւ կը պնդէ թէ Պ. Սապահ-Ֆիլիշեանի վրայ չեղտուած է նախ քանի մը յատկութիւնները զորս իր անձին վրայ միացնելու է զպրօքի մը վարելը: Եւ սակայն իր ամենէն կատարել հակառակորդներն իսկ չեն ուրանար իր արժանիքը եւ կարողութիւնները, որոնք անշուշտ կարգ մը ինքնագով անօրէններու միջակութիւնէն սարբեր բաներ են: Փափագելի է որ ժամ առաջ վերջանան թիւրիմացութիւնները փոխադարձ զմուռնանքով, նկարագրի մեղմացումով, վերջապէս ուր է կերպով, որպէս զի կրթարանի խանդարումով մը մեր զաւակները չը տուժեն:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱՒԻՐ

ԹՈՒՐԲԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գոռնիկ Տէ Պալիսանէն.

«Րուհ էջ քեհամ» (ոգի յեղափոխութեան) խորագրով տետրակ մը հրատարակուեցաւ Պոլսոյ մէջ երկուստարկ թուրքերու կողմէ: Այս տետրակ, որ շրջաբերութեան հանուած է բազմաթիւ օրինակներով, թուրքերոյ արդի վիճակը կը բազդատէ Յրանասայի վիճակին հետ 1789ի յեղափոխութեան ատաջ: Մանրամասն կը պատմէ զայն առաջ բերող բոլոր զեպքերը եւ կը միտի թուրք ժողովրդեան ցուցնել թէ ինչպէս հարկ է պատրաստուիլ յեղափոխութեան, զոր յիշեալ տետրակը անհրաժեշտ կը դասէ:

Ժընէվի երկուստարկ թուրքերու քօմիթէին օսկան Օսմանլըն իր մայրս 15ի թիւին մէջ կը հրատարակէ 1898 ապրիլ 27ին ելլալով ատաջին քարտուղարին ուղղուած նամակի մը պատճէնը: Այս նամակով, քօմիթէն կը յայտարարէ թէ ստոյգ աղբիւրէ գիտէ որ այս վերջին ժամանակներս ելլալով մէջ պատրաստութիւն տեսնուած է զաւելու Մուրատ Ե.ի կեանքին դէմ, որ 22 տարիէ ի վեր բանտուած է, եւ պարտք կը սեպէ ձանուցանել Մուլթանի քարտուղարին, — եւ տսիկայ յանուն օսմ. ազգեցութեան եւ

պատուին, — որ եթէ երբեք, հակառակ երկուստարկ թուրքերոյ ձեռք առած միջոցներուն, սեւ է զժգրախօսութիւն պատահի Մուլթան Մուրատի, հանրային խղճը պիտի համոզուած ըլլայ թէ ոճրի մը հանդէպ կը զբառնուի: Նոյն օսկանը կը ծանուցանէ թէ քօմիթէն միեւնոյն ժամանակ խնդրաւոր մը ներկայացուցած է մեծ տէրութեանը վեհապետներուն չէ թէ քաղաքական նպատակով, այլ պարզապէս յանուն մարդասիրութեան, խնդրելով անոնցմէ որ հարկ եղած միջոցները ձեռք առնեն Մուլթան Մուրատի կեանքին պահպանութեանը համար, որուն մեծ վտանգ մը կ'սպաննայ:

Լ'Առեհնիլին կը գրեն Պոլսէ.

Կարգ մը հրապարակագիրներ հայ ազատական մամուլէն Տատեան Արթին փաշայի նկարագրով մարդ մը նուրբան եւ Ընկ. պէս անհասանելու հետ շփոթելու սխալը կը գործեն: Այս հրապարակագիրներէն մէկը վերջերս կը գրէր թէ Արթին փաշա, հանգուցեալ Յակոբ փաշա եւ հայր Մկրտան խորհուրդ տուած էին Աշքեանի հրաժարական շաւլ, եւ թէ ասիկա եղած էր հայ հասարակութեան հասած բոլոր շարիքներուն պատճառը: Ես կարող եմ հաւաստել ձեզ թէ այս րոպէս զբաղարարութիւն է ինչ որ կը վերաբերի Արթին փաշայի անձին: Այս սակաւաւոր պետական մարդը բնաւ խառնուած չէ հայկական գործերուն Աշքեանի պատրիարքութեան օրով, որ արդէն ամենեւին համակրութիւն չէր ներշնչել իրեն: Արթին փաշա միայն Յարթօղլուի տեղապահութեան ատեն հայ հասարակութեան գործերով զբաղեցաւ: Նմանապէս ձեռնարկ մը նայ իզմիլիտի Պատրիարքութեան օրով, եւ Մուլթանի յայտնի հրամանին վրայ ստեղծութիւններ ունեցաւ այս կրօնականին հետ չափաւորութիւն պատուիրելու համար անոր: — Մուլթանը իմացի է, կըսեն, թէ Դրօշակեանները մտադիր են ընդհանուր ժողովք գումարել թիֆլիսի մէջ: Կը վախնայ որ անոնք չեղան հոն որոշում տան ըրտնական նորանոր արարքներու: Ուստի հրամայեց ի Արթին փաշային փութով ժընէվ զրկել իր օրդին Տիրան պէյը կամ ուրիշ մէկը որ Դրօշակեան կուսակցութեան հետ բանակցութիւնները վերակարգէ: Մուլթանը կը բազմայ վերջ մը գնել ժնեվի քօմիթէին շարժմանը՝ կամ անոնց անդամները մեծկակ գումարներու միջոցաւ շահելով, կամ անոնց խոտանալով մէկ քանի զվճարմանը ընել իր հայ հպատակներուն, զիջումներ որոնք լսի նորանոր խուսափումներ պիտի ըլլան անշուշտ՝ բարեկարգութեան համար: Բատիչանը համոզուած է որ միեւնոյն Դրօշակեան կուսակցութիւնը կարող է ազգու. ձեռնարկ մը ընել: Կըսուի թէ Դրօշակեանները այս համոզումը ներշնչելու են ան բանադրանքներուն որոնք շատ չընեն զրկուեցան Արթին փաշային կողմէ: Թուրք նախարարութեան մէկ մասը խորհուրդ տուեր է Մուլթանին բանակցութեան մտնելու չափաւոր հայրենութեան հետ, ուրոնք Պէրլինի գաշնագրին 61 յօդուածին գործադրութիւնը կը պահանջեն. բայց ն. վեհապետութիւնը, աւելի երկիւղի հաւորք քան խոհականութեան, հրամայեց է տուակապել ժընէվի քօմիթէին զի մտմ ընել: Աւելորդ է ըսել թէ այս

մանրամասնութիւնները վերագրուեցան իր կողմը կը հաղորդեմ»:

Պ. Միւնաս Չէրազ իր կողմէ կ'աւելցնէ սա զխոտուածութիւնը.

Առանց մասնակից ըլլալու Դրօշակեան կուսակցութեան տեսութիւններուն, կը հաստատեն որ անիկայ չի կաշառու իր իր սկզբունքներուն դէմ գործելու համար: Ուստի Մուլթանը այս անկող գաշնակցութիւնը չպիտի կրնայ զինաթափ ընել՝ առանց երաշխաւորելու իր հայ հպատակներուն եւ ուրիշներուն կեանքին, պատուին եւ ինչքին ապահովութիւնը: Եականը այս արդիւնքը ձեռք բերելն է. բանադրանքներուն հանգամանքը շատ փոթիւնիս չէ՛ թէ՛ մեր եւ թէ՛ բոլոր հայ հայրենասէրներուն:

Վիէնայի կէս-պաշտօնական Բոլիթիշէ Կորիսթրոնից հետեւեալը կը հրատարակէ.

Այս օրերս երեսունի չափ հայեր նորէն ձերբակալուեցան. ասոնց մէջ կարգ մը անձեր կան որոնք Պատրիարքարանի կողմէ պաշտօն ստանձնած էին հանգանակութիւն կատարելու՝ Էրզրումի նահանգին մէջ վերջին խոտուածութեանց ատեն կործանուած եկեղեցիի մը վերակառուութեանը համար: Այս անձեր ձեռք տրուեցան իրրեւ հայ քօմիթէի հաշտոյն գործողներ, ինչ որ քաղաքակապէս սըխալ է սակայն: Ուստի, հայոց Պատրիարք Օրմանեան նորէն պալատ գնաց՝ բողբջելու աս ձերբակալութիւններուն դէմ:

Փանի մը խալափի պաշտօնատարներու այս ընթացքը յօժ պարտաւելի է: Ժընէվի հայ յեղափոխականներին եկած լուրերուն նայելով, կարելի է վստահ ըլլալ որ ասոնք հանգարտ պիտի մտնեն, պայմանով որ Մուլթանը հրամաններ տայ ազգուսպէս դարձնելու անոնց հայ ազգին պէտքերուն: Պատրիարքարանը ամէն ջանք կընէ այս նպատակին հասնելու համար: Բայց ստիկա ինչպէս կարելի է երբ ստորակարգ պաշտօնականներ արտօնուած են ամենէն կամայական եղանակով հալածել անմեղ հայեր: Ընչոք ժամանակն է վերջ մը գնելու այս արտօն մեքենայութիւններուն:

ՎԱՌՆԱՑԻ ԲՆԹԵՐՅԱՐԱՆԻՆ ՆՈՒՎՅՐ

Երկու երեք շաբաթէ ի վեր Բնթերցարանին դուռը փակուած է ժողովրդին առջև: Չգիտեմք թէ պատճառը այդ հաստատութեան զեկը բուսանձնողներուն կողմ փնտռելու է, որոնք իրենց կողմէն անարմար հանդիսանալով ընթերցարանը բաց պահելու անկարող եղած են, թէ ժողովրդին՝ որ թէեւ հազարուամէկ տեղեր շտապաբար կը մտնէ իր գրամբ, ընթերցարանի համար կը զլանայ սալ ինչ որ կը պարտի. զժգրախօսարար աս վերջին ենթադրութիւնն աւելի ճիշդ ու հաւանական կը կարծենք:

Մեր անհատական խոնարհ կարծիքով, փոխանակ կուսակցական անտեղի վէճերով զբաղելով մեք մեզի մեծ յեղափոխականներ ցոյց տալու եւ մեր սառն անտարբերութիւնը քօղարկելու՝ կուսակցութիւններու անմիւտութեան պատրուակին տակ, կըր մենք ամէն մէկերնիս մեղ բաժին ինկած աշխատութիւնը չզլանանք հանդէպ մեր պատկանած ազգին, այն ատեն մեր փափագած նը-

պատակին իրագործմանը մօտեցած կըլլանք քիչ շատ:

Պահ մը ըսենք թէ Դաշնակցութիւնը կամ Հնչակեան կուսակցութիւնը պարտաւորուած են թագուել գործել եւ մենք ալ չկարենալով թափանցել անոնց ներքին գործունէութեան, կը կասկածինք եւ չենք ուզեր վճարել (°°°). բայց ինչ ըսենք երբ վառնայի պէս կարեւոր կեդրոնի մը մէջ մեր մէկ հատիկ ընթերցարանի իսկ չենք ուզեր բաց պահել: Եթէ ընթերցարանը բուսածը անպատեան մըն է, ատոր անտեղութիւնը թերթերու միջոցով ապացուցանենք, որպէս զի մեր խելացի խորհրդածութեանն ուրիշ տեղերու աղգայիններն ալ օգտուին եւ անտեղի ծախսեր չընեն այդ նպատակին համար: Իսկ հակառակ պարագային, երկուստարգայս համար պատուաբեր չէ այս բազմահայ քաղաքին ընթերցարանին փակ մտալ:

Ընթերցանիւր

ՊՈՒՐԷՇԻ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

Պուրէշի Հողաբարձութեան հերքման գիր մը ստացած ենք ի մասին մեր մասնաւոր թղթակցին՝ տեղւոյն ուսուցչին եւ քահանաներուն դէմ ըրած քննադատութիւններուն որոնք արդէն արձագանգ գտած էին նաեւ ուրիշ թերթերու մէջ:


Այդ հերքման գիրը չպիտի հրատարակենք խնայելու համար Հողաբարձութեան պատուին, որովհետեւ վերջին ծայր անվայել սճով մը խմբագրուած այդ գրութիւնը շատ նուստացուցիչ տպաւորութիւն մը կը թողու քաղաքակրթեալ երկրի մը ազգ. մարմնին փափկանկատութեան վրայ:

Հողաբարձութիւնը պէտք է գիտնայ թէ մեր մասնաւոր թղթակցները երբեք «բախտախնդիրներու» եւ «պղտոր ջուրի մէջ» օրացողներու» մէջէն չենք ընտրած եւ Պ. Սաքիա—Մուրի, այն գրութեան հեղինակը, Պուրէշի հայ երկուստարգութեան լաւագոյն անդամն է, եւ հոգով սրտով հայ ու պատուաւոր ընտանիքի մը զաւակը:

Այդ լայն զրուցութիւնը որոտորագրուած չէր եւ միայն կնիք մը կրէր, սա կասկածն ալ ներշնչեց մեղ թէ մի գուցէ առանց Հողաբարձութեան գիտութեան զըրկուած ըլլայ եւ կամ շահակիցները շարաշար գործածած ըլլան Հողաբարձութեան անդամներուն հայրենի անհմտութիւնը:

Կը սիրենք աւելի կանոնաւոր այս գաղափարին վրայ, մեղ վերապահելով գործին իսկութիւնը աւելի մօտէն քննելու հոգը, հերքման գիրն ուսման երէն թարգմանութիւնը Հողաբարձութեան զրկելով:

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ



Ատանաէն Էտիրնէի բանորդ տարուած 19 ազգայինները, որոնց չորսը քահանայ և սարկաւազ, ներման արժանանալով անցեալ շաբթու Պոլիս բերուեր են ու հաւատարմութեան սովորական ուխտը ընելէ յետոյ ազատ արձակուեր են: Ուրախ ենք ծանուցանելու որ փառատարան և բանաստեղծ Պ. Վահան Մալէզեան որ այս բանտարկեալներուն մէջ կը գտնուէր, նոյնպէս ազատուեր է:

—Տոբթ. Սիմոն Վէպէր հայագէտ գերմանացիին որ վերջերս սկսած է յատկապէս Նշնկայ ոսկեղենի կրթողն զբաղել, «Տէր Բաթոլիկ» թերթին մէջ ընդարձակ յօդուած մըն ալ կը հրատարակէ «Բրիտանիական ճշմարտութեան ջատագովութիւնը հին հայոց քով» խորագրով:

—Հանգէս Ամբրիայի մէջ կը կարգանք թէ Լեմպերի Համալսարանին գեղարուեստից պատմութեան ուսուցչապետ լեհահայ ասպետ Անտոնեան՝ ընտրելով յօդուածով մը բաւական ամփոփ զաւրիար մը կուտայ Լեհաստանի հայ գաղթականութեան անցեալ և արդի վիճակին վրայ: Ոյս գաղթականութեան հին սրայծառութեան նսնմանալու նպատակով, կըսէ արդոյ ուսուցչապետը, հայերուն միայն մէկ տեսակ զբաղում ունենալը եղած է. վաճառականութիւնը: Հին ժամանակները երբ տեղացիք իրենց երկրէն դուրս չէին ելլեր, հայերը վաճառք կը փոխադրէին արեւելք և արեւմուտք, բայց վերջերս երբ հայտնիացան թիւերը գիւրացու և երոզացիին

պէտք չունի օտար միջնորդի և համեմատաբար գերազանց է արեւելքցիէն իր առեւտրական գիտութիւնովը, զրաւեց արեւելքն ալ, արեւմուտքն ալ և հայը իր հին և դիւրին ապարեղը կորսնցուց:

—Փարիզի այս արուան Սալօնին մէջ որ մայիս 1ին բացուեցաւ, նորէն հայ արուեստագիտներ իրենց մասնաւոր տեղը բռնեցին: Պ. Ջաքարեան, որ «Նաթիւո-Մոսթրի» ճիւղին մէջ հեղինակութիւն ստացած է, ցուցադրեց երկու պատկեր. առաջինը կը ներկայացնէ գաւաթ մը ջուր բերեղևայ ցոլքերով, կրթնած սեւ սրուակի մը և չըջապատուած դեղձերով, սեւ ու սպիտակ ողկոյցներով, աղիւսէ սալարկի մը վրայ ուր դանակ մը կայ: Երկրորդն ալ նմանորինակ սևաբան մը կը ներկայացնէ: Ուրիշ չորս հայ ցուցադրողներ ալ Պ. Արսէն Շապանեան, Էրզրումցի, Էսկար Շահին, Պոլսեցի, Սուրգիս Տիրանեան, Պոլսեցի և Պ. Ժան Գրիգորեան, Գանձերէցի յաջող պատկերներ պարզած են Սալօնին մէջ:

—Հանգիս Անտոնեանի մէջ կը կարգանք թէ Յովսէփ Փուշմանեան անուն երթատար գաղտնիքներն մը նկարները մրցանակի արժանացի են Փարիզի մէջ, և Երթալիօ միլիտանտներին մէջ Պ. Ուիլիամ Թոմաս յանձն առեր է հայ արուեստագիտին պարզական ծախսերն հոգալ:

—Հանգուցեալ Գեորգ Գանանեանի թողած 47,000 բուլլիի հարստութիւնը պիտի գործածուի բարեգործական նպատակով. հանգուցեալին ալրին, արիկին վաճառէ Գանանեան, որ կուսակառուար նշանակուած է, զիս չէ որոշած թէ ինչ գործի պիտի յատկացնէ այդ գումարը:

—Տիրան Գարակէօղեանի կատկին խնդիրը խառն ժողովի սեղանին վերայ եկած ինկած է զարձակ: Հանգուցեալ կատակոսարարն եզրափակելով Գրիգոր արան չուզի իր եզրօր դեղեցիկ մակն ազգի կտորը նետել: Ասոր համար սակարկութեան ելած է մէկ վար մէկ վեր. հիմակուհի մը մինչև 20,000 սկիի ելլալու քաջութիւնը ունեցած է. մինչ կատակատարը իր հայտնութեան 20,000 սկիին իր ազգին կենթադրեն ունեցած է. մինչ կատակատարը ոսկիին երբորդ մասը, 80,000 սկիին իր ազգին օգտին յատկացուցած է. թող ըլլայ 60,000 սկի, ինչպէս կենթադրեն ունեցած է: Բայց, ինչպէս այս պատկերները ըստած առաջին ճանկէն, որ քառորդ դարէ ի վեր ազգին կատակած գրամները անամթաբար չարիքու տխրակն ըրտնուած է:

—Մանթա հայագէտ բանասէր Բրոք. Ֆրիտրիխ Միլլեր մետեր է վիէնայի մէջ:

Ն Ա Մ Յ Կ Յ Տ Ո Ւ Փ

—(—) Պ. Մաքս. Պուքրէշ. — Ստացանք զրամը:

Պ. Ա. Սիլիստրէ. — Կը ցաւինք որ առ այժմ չպիտի կրնանք օգտուիլ ձեր գրութիւնէն, մեր բանասիրական մասը արդէն զբաղուած ըլլալով:

Տ. Կ. Գ. Պրայլա. — Ձեր փնտրած անձը հոս է: Վասակ Սիւնի, Շուսու. — Պ. Վասակ, երբեք չպիտի հաւատայինք որ մերթուած ձեռագիր մը ձեզի այդքան կատարեցնէր: Գիշ մը զսպիցէք յիմարական թափերնիք որ ձեզի խնդ ու խելառ բաներ ըսել կուտայ և որ շատ սուղի կրնայ նստիլ ձեզ առաջիկային, երբ ամէն բան պարզուի:

ՏԵՂԱԿԱՆ

—(—) Ն Ո Ր Գ Ի Ի Տ

Տեղուց թաղ. խորհուրդը կը շարունակէ իր գիւտերը՝ նորանոր հասոյթներու ստեղծման համար: Այս անգամ իր աչքը նետած է երկր եկեղեցիի (ալուածներուն վրայ): Սա իրաւ է որ հիմա թաղ. խորհրդին համար

արժանապա ունեցած է խնդիր դարձած է՝ իր կերտած վարժարանին տարապայման պիտուէն հաւատարակչու և զայն մինչև տարիչը ան քչքչելու գործը: Բայց ասիկա այնքան գերազանց պատճառ մը չէ որ եկեղեցական արդէն աննշան կալուածները վտանգի ենթարկէ՝ «Իբօթէրի» դրութեամբ անոնցմով դրամ ձեռք բերելու համար: Մեզ տրուած տեղեկութիւններուն նայելով, Ձարպորիս պոզտային վրայ գտնուած ազգային պարագ գետինի մը մասին թաղ. խորհուրդը բանակցութեան մտեր է պուլիար վաճառական Պ. Բանիցաի հետ, որ օրինաւոր սովորով քանի մը հազար ֆրանք փոխ պիտի տայ երկր թաղային անտուիկն՝ հինգ տարի պայմանաժամով, ու այս ժամանակուան համար յիշեալ կալուածը իբրև գրաւ իր վրայ պիտի դառնայ եղեր:

Փորձով գիտենք թէ այս կերպով ազգէն կորցուած կալուած մը որչափ քիչ հաւանականութիւն կընծայէ նորէն անոր դառնալու: Եւ յետոյ, անտրամաբանորէն պատրաստուած դպրոցական պիտուէի մը ազգ. կալուածները զոհելուն մէջ՝ մենք ազգին համար գոնէ ու է «էնթէնէ պոլիթանիք» չենք տեսներ:

Կը հազորդուի մեզ թէ թաղ. խորհրդի հասոյթի առաջին գլուալ, խաչալէմը, որ այնքան անպատեհութիւններ առթեց, ձախողութեան հանդիպուէ: Թաղական խորհուրդը առանձնաչը նորհեալ խաչալէմէն զատ՝ ազգայիններու համար նոր մը շինել սուած էր ստորին փայտէ. արդ, այս նորակերտ խաչալէմը գողցուեր է եկեղեցիէն: Ու անհը-

կարար հովանիին ներքեւ ապաստան պիտի գտնեն բոլոր արեւելեան ազգութիւնները: Այո՛, այո՛, մենք եւս երախտապարտ ենք թեղ, ո՛ր աղնիւ ազգ. ան բոցերը՝ որ քու բարեկեցութիւնդ փճացուցին, ան արեան գետերը՝ որ քու զաւակներդ խեղդեցին, Արեւելքի մէջ Ռուսիոյ աղքատութեան վերջին սնացորդներն ալ պիտի ջնջեն: Ձանգակներու ան զօղանջը՝ որ քու մեռելներդ կուղարկէր, մեզ համար փողի ձայն մըն էր, որ արթնանաք մեր ամենէն տխմար ու նաեւ ամենէն ամթալի գերութեանէն՝ պատմական «ազատարար» դէպքերու յատուկ, որոնց նշանակութիւնը սխալ կը մեկնէինք:

Տօբթ. Բախովսի
4682
—(—)

ՌՈՒՍԻԱ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ (8)

1888 Հոկտ. 10 ին «Ռուսի Բորիէր» թերթին մէջ՝ Սուրբ թանի հարէմի մասին եղած դիտողութեան մը առթիւ Ձէնգուրան (գրաքննիչ պաշտօնէութիւնը) չըջաբերական մը կը հասնէ՝ որով կարգիլէ յատկապէս այս տեսակ ո՛ր է լուր հրատարակել: 1893 մարտ 1ին Ձէնգուրան երկրորդ չըջաբերական մը կը հասնէ, ուր կը յիշեցնէ առաջինը—1888 հոկտ. 10 թուականի, ըսելով որ կարգ մը թերթեր հակառակ այդ չըջաբերականին օտար թերթերէն Սուրբ թանի անձնական Լեանքի մասին լուրեր կարտատպեն և կը յատուկ թէ ապագային այդ տեսակ բանէ պէտք է խստիւ ետ կենալ:

Այս արդեւքները կը տրուին անմեղ, աւելի հետաքրքրաշարժ քան վերաւորիչ տեղեկութիւն-

ներու համար, և ընթերցողը կրնայ հետեցնել թէ Ռուսիոյ մէջ կարելի բան չէ ի նպատատաւար չըջաբերականն:

Վ. ճառուած գիւտնադիտական և կէս-պաշտօնական Ռուսիոյ կողմէն թիւրք շարագործներու գովեստներ և հայերու հասցէին հայհոյութիւններ, որոնք կանհետին ընդհանուր սառն լուծեան մը մէջ և որոնք կը մնան առանց ո՛ր է բողոքի՝ պատուաւոր, աղնիւ, լուսաւորեալ և ընկերական Ռուսիոյ կողմէն, որուն լեզուն շարունակ կախում կը մնայ գրաքննական միջաւի երկու լեզուակներուն միջեւ:

«Ղն որ երկրիւ կողմէ ինձ, կըսէր Բասթալ, աստեղային անջրպետներու մէջ տիրող անխոստ և անչըռկ հանդարտութիւնն» է ու այն որ երկրիւ կողմէ նաեւ մեզ, այն որ մեր արեւնը կը սառեցնէ մեր երակներուն մէջ՝ այդ գերեզնամական խաղաղութիւնը, Սիպե-

րիոյ ամայի դաշտավայրերու նման անձայր լուծութիւնն է, որ ուսկառավարութեան գործերը կը քողէ. . . : Ռուսիա երկիր մըն է, ուր իշխանութիւնը չպիտի թոյլատրէ որ մայր մը բաճրաձայն ողբայ ոտախկանութիւնէն սպանուած զաւակին վրայ:

Եւ զուր ո՞վ էք, ո՞վ գատողութեան զուր՝ մարդեր որ ազգերը կը թաւալէք այս անյատակ գերեզմանին մէջ:

Բայց, աւագ, ոչինչ պիտի վերադարձնէ հայ ազգին, ոչ իր նախկին ուժը, ոչ իր յոյսերուն և իր հաւանքուն ամբողջութիւնը:

Հայտատան, խեղճ և գժբախտ Հայտատան, զու յաւիտենապէս զատապարտուած ես կրել գերութեան շղթաները, անթուութիւնը և թշնամանքը: Ո՛չ, այն երկրէն՝ որ քու ազգիդ զոհերովը պարարտացաւ, որ անոր արցունքով և արիւնովը ոռոգուեցաւ, պիտի բուսնի աշատութեան այն տերեւախիտ ծառը, որուն փըր-

նար եղեր է գտնել զայն : Մէկ
ցաւ մը միայն ունինք . մինչև որ
գողոնը գտնուի կամ նոր մը շին-
ուի , ազնուականի խաչալէմը
պիտի ստիպուի ազքատ ննջեց-
եալներու առաջնորդել . . . :

Փ Ա Ր Ո Ս

—(—

Փահիրէ հրատարակուող Փարոս
թերթը իր առաջին տարեշրջանը
փակելով կը ծանուցանէ թէ՛ այլ
ևս չպիտի շարունակէ հրատարակու-
թիւնը : Ինչպէս գիտենք , այս թեր-
թը կը հրատարակուէր մեր արդի գրա-
կանութեան ամենէն հետաքրքրա-
շարժ գէմքերէն մէկուն՝ Պ. Յարու-
թիւն Ալիիարի ձեռքով , որ , կր-
նանք ըսել թէ , Պարոնեանին ետքը ,
մեր առաջին երգիծարանն է եւ ու-
րունքով կը նսեմանան կարգ մը
խեղճուկրակ զաւեշտագիրներ : Պ.
Ալիիար սխուր շեշտով կը յայտնէ
թէ գործը չշարունակելուն պատճառը
քաջախիտութեան պակասը եղած է ,
որուն վրայ բնաւ տարակուսելու
պատճառ չունինք :

Փարոս իր միամիտ հաւաքածո-
յով մեր արտասահմանի մամուլին ա-
մէնէն գեղեցիկ փունջերէն մէկը պի-
տի մնալ միշտ : Աւ ցաւ կը պատճա-
ռէ մեզ իր զազարուքը , անոր համար
մանաւանդ որ անով կ'անհետանայ
զուարթ ու խնդազին շեշտը , զոր կը
բերէր արտասահմանի լրագրութեան
սխուր ու պայքարատամբողջութեան
վրայ :

Սրտանց կը մտղթենք սակայն որ
երգիծարան-խմբագրակաւոր յաջողի
նորէն սկսիլ իր համեզ թերթին հը-
րատարակութիւնը :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

(ԹԱՂԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԵՆ)

«Կրէտէի մէջ եթէ պետութիւն-
ները չչտապեն ինքնավարութիւն-
ըն անմիջապէս կաղմակերպելու
և եթէ այդ փափակ կաղմակեր-
պութեան վարչ մը չտան յան-
ձին առժամեայ կամ վերջնա-
կան կառավարչի մը որ իրենց
ընտրածը ըլլայ , կրօնքով քը-
րիստոնեայ եւ ազգութիւնով ոչ-
օսմանցի , տէրութիւնները մեծ
զժուարութիւններու մատնուած
պիտի ըլլան : Արդէն օսմ . կայս-
րութեան ուրիշ մասերուն մէջ
փոթորիկի նախաշաւիղ որոտնե-
րը կը լսուին : Մակեդոնիան փակ
զաշտ մը կը ներկայացնէ պալ-
զանեան այն տէրութիւններուն
հակառակութեանցը որոնք ան-
միաբանութեան մէջ նետուեցան
Միլան թագաւորին անձնատէր
քաղաքակառութեամբը եւ Վիէն-
նաի դահլիճին մեղաւորութիւ-
նովը :

«Հայաստանը , այդ տխուր զոհը
ոչ միայն բիրտ ուժի ոճիւրնե-
րուն այլ եւ զիւանագիտութեան
գրժումներուն եւ արեւմտեան
մարդասիրութեան նուազումնե-
րուն , ցաւագին կը խլրտի : Տըվ-
ղիսի մէջ գաղտնի քովի գէներու

զումարումներու մասին տարտամ
զրոյցներ կը շրջին : Գաղտնի
բանակցութիւններու նկատմամբ
խորհրդաւոր սպառնալիքներ
կարձակուին :

«Նրանի թէ Եւրոպան եւ իր
խլղճը ազատեցու համար այն
թմրութենէն՝ ուր ընկղմած են
ձգձգող ու խարդախ քաղաքակա-
նութեան մը հետեւանքով , հարկ
չմնայ որոտման մէկ նոր պայթու-
մին » :

Ս Ե Ր Պ Ի Ս

Մայիս 21ին Պեղիբատի մէջ
տեղի ունեցան սերայ խորհրդա-
րանին ընտրութիւնները : Մի-
լան նախորդ արքային կուսակ-
ցութիւնը տարաւ յաղթանակը .
Վլաւան Երկէվիչ եւ նախկին
խնամակալ Ռիսթիչ , Միլանի
բարեկամները , բոլոր Պեղիբատի ու
Սերպիոյ մէջ նմանը չտեսնուած
ճնշում մը բանեցնելով իրենց
ուղած ձեւով կազմեցին Ս. քուբ-
չինան : Ընտրութեանց ստեն
զօրքերը իրենց զօրանոցներուն
մէջ կազմ ու պատրաստ կուպատե-
ին : Արմատական , յառաջդիմա-
կան ու ազատական կուսակցու-
թիւնները յուսահատօրէն մաքու-
ռեցան թէեւ , վերջապէս ջախ-
ջախուեցան սակայն՝ սուինի ու-
ժով եղած աւս ընտրութեանց
մէջ :

Սքուբչինաի այս նորոգ կաղ-
մակերպութիւնը յաջող ու բա-
րեգուշակ շրջան մը չի բանար
Սերպիոյ համար :

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Եանքիները Տօն Քիչօթի հայ-
րենակիցներուն հետ պզտիկ կա-
տակներ կընեն հիմակ : Պատե-
րալմի եր . ու կեդրոնական կէ-
տերն ալ Անթիլիաններն ու
Փիլիպանները համեմատապէս
անգորր երեւոյթ մը կը ներկա-
յացնեն արտաքուտա : Սակայն որ
մը չէ օր մը ահաւոր պայթում
մը առաջ պիտի գայ : Եւ արդէն
Պ. Մաք Քիչիլի անցեալ օր յայ-
տարարեր է որ խաղաղութեան
խօսքը այն տուն միայն կրնայ
արատաւելուիլ երբ Քուպի եւ
Ֆիլիպաններու մօտ երկու ջախ-
ջախիչ յաղթութիւններու ձեռք
բերուին :

Մովակալ Սամբուն եր'իցս
փորձեց բռնի ներս մտնել Սան-
դիակօի նեղուցէն ու զարնել
փճացնել սպանիական տորմիզը .
սակայն ներքին ամբողջութեան
թափուած անվրէպ ու սաստիկ
կրակ մը ստիպեց զինք ետ դառ-
նալ . նոյն իսկ իր մէկ յարձակ-
ման տան «Մերիմաք» շողե-
նաւը ընկղմեցաւ նեղուցին ճիշդ
բերանը . Սամբուն կըսէ թէ ինք
կամաւ ծովաձուկն ըրաւ այդ ի ո-
չոր ու անպէտ նաւը՝ նեղուցին
անցքը զժտարացնելու համար ,
մինչ սպանիացիները կը պնդեն

թէ իրենք քաջապէս կուսելով
ընկղմեցին զայն : Որուն կուզէք
հաւատալ : Մովակալ Սամբուն
կը շարունակէ արթնութեամբ
հակել կափարիչին մօտ , որուն
ներսը բանտուած կը գտնուին
Սէրվէրա Տովաչալին սրբնթաց
մարտանակերը :

Վերջին հեռագիր մը կը ծու-
նուցանէ թէ ամերիկացիք վերջ-
նապէս յաջողեր են 5,000 զօրք
հանել Քուպի յամաքը՝ ստանց
ետ մղուելու սպանիացիներէն .
այս զօրքեր միանալով 3,000 ա-
պրատամբներու հետ պիտի յար-
ձակին սպանիացոց վրայ , որոնք
արդէն իբր թէ կամաւ թողու-
ցեր են ամերիկացիներուն մուտ-
քը՝ վճռական ճակատամարտով
զանոնք ջախջախելու համար ցա-
մաքի վրայ :

Ֆիլիպաններուն մէջ սպանիա-
ցոց զիճակը շատ միտթարական
չէ : Անդլ . «Սուիթթ» թնդանօ-
թակիրը կը հեռագրէ թէ ապրս-
տամբները չորս միլոն հեռու կը
գտնուին Մանիլաէ : Սպանիական
զօրագունք մը ըմբռնանալով
զարկեր մեռուցեր է իր բոլոր
սպանները : Շատ կուսներ տեղի
ունեցեր են ապստամբներուն եւ
սպանիացիներուն միջեւ , ու-
րոնցմէ շատեր սպանուեր ու
1,800ի չափ դերի բռնուելով
Քավիթէ տարուեր են :

Թ Ե Ս Ա Լ Ի Ս

Մայիս 25 ին հելլէն բանակը
դրաւ եւ թրիքալան , յետոյ Վօ-
լօն որ վերջին կէտն է գրաման-
եռհէմ փաշա , օսմանեան զօրաց
ընդհանուր հրամանատարը , մեկ-
ներ է թեոսիլի Պոլիս՝ իր յաղթա-
նակներուն գալինները ստանա-
լու :

Դուռը յայտարարեր է թէ
թէսալիան ամբողջապէս պար-
պուկէն յետոյ շրջաբերական մը
պիտի զրկէ տէրութեանց , խնդ-
րելով որ վերջնական լուծում մը
տան Կրէտէի խնդրին :

Պ Ո Ւ Կ Ո Ր Ի Ն Ե Ի Թ Ի Ի Բ Ի Ն

Պոլսոյ պուլկարական գործա-
կատար Պ. Մարքով Մեծ-Եղար-
գոսին տուեր է ծանուցադիր մը
որով կը թուէ սպանութեան 13
գէպքեր կամ ուրիշ հարստա-
հարութիւններ՝ մեծ մասամբ
թուրք զօրքերու կողմէ գործու-
ած Սիլիպի նահանգին մէջ՝ մա-
յիս ամսուան առաջին կիտուն :
Այս ծանուցադիր կը բացատրէ
հետեւանքները այն սպառնու-
թեան որ առաջ կուգայ Պուլկա-
րիոյ մէջ այս գէպքերուն բեր-
մամբ եւ Սիլիպի վալի Հաֆըզ
փաշային պաշտօնանկութիւնը կը
պահանջէ :

—(—

Թ Ա Տ Ր Ո Ն

Գերատանական նորակաղմ հայ
խումբը այս գիշեր Սաէտինէն իւ-
սրահին մէջ պիտի ներկայացնէ
«Չոհի փոխանակ զոհը» տաւոր
3 արար եւ «Երկու շատախօսները»
յույժ զուարճալի զաւեշտը :

Ի Լ Ա Ն Ը Ր Ե Ս Ս Ի

Վառնա վէ էթրաֆ քէօյլերուէ Իրան
սէվիթի թէպատարնապա պուրուհան
բազմութիւնը վէվաթա պիտի բերի չի .
Մայիս այրնտա քէնտիլերի շախն
վէ Խախտ օլմատարը հալտէ վէքեա-
լէթէն բազար կիւնլէրի էօյլէնալն
սօղրա սահաթ Լուէն 5է գատար օոն-
սօլոսանէյէ թէլրիֆ խտուպ . էլլէ-
րինաէ օլան էվրապարը թաստիզ վէ
խիմլէրինի քի թիւկ թէֆտէրինէ
գայա իթտիլրմէլի տիրէր :

Վիս Գօնիլա ճր Բիսս
Վառնա , Գ. ուշաա , ուլիցա Տէպ-
րաքա ն. 66 :

Ս Ա Փ Ր Ի Չ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ
հասարակութեան թէ ժամանակէ մը
ի վեր աշխատելով Օթէլ Քօմէրիալի
կից սափրիչ Անկէլ Եուվանօֆի քով
և տեղոյս պուլկար եւ հայ պատ-
ուարժան յաճախորդացս վստահու-
թիւնն առ իս դրաւած լինելով , այս
անգամ մասնաւոր խանութ մը բացած
եմ Ուլիցա Բրէսլավաքա , օթէլ իմրէ-
րիալի կից :

Լիսայոս եմ թէ պատուարժան հասա-
րակութիւնը չպիտի զլանայ շարու-
նակել ինձ իր քաջալերը , այցելելով
այսուհետեւ իմ նոր խանութը ուր
պիտի գտնէ կանոնաւոր գրք եւ ա-
մենամեծ մաքրութիւն :

Միմրան Սեդրակեան
Եւ իմ ընկերս
Սեթօն Իսպիլիեան

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 30 Մայիս
ՊՈՒՂՏՍՅՅ
Վակօն , լիպրա 47—51 , հէքթօլ .
9.50—10 ֆրանք
Արապա , լիպրա 47—55 հէքթօլ .
8.50—10 ֆրանք
ԱՐԲՍ .
Լիպրա 38—40 հէքթօլ 4.80—5
ֆրանք
ՄՐԱՐԲ
Վակօն , լիպրա 57—58 հէքթօլ .
7—7.50 ֆրանք
Արապա , լիպրա 57—60 հէքթօլ .
7.80—8 ֆրանք
ՅԱՍՈՒԼԵՍ .
100 օգգասը 15—20 ֆրանք՝ մալա
կէօրէ
Առապա մուսթէլէսի Նարօլոն 21
ֆրանք հիսապը իւէ տիր .
Կիւնաէ 1—2 վակօն վէ 15—20 ա-
րապա պուլկար , 3—4 արապա արքա ,
կէլմէքտէ տիր :

ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍՆՃԵԱՆ
Կ Ո Շ Կ Ա Կ Ա Ր
Մուսալլա , հաճի Հասան աղալի
օթէլին տակ

Ճաշակաւոր , տոկուն , ձեւուոր
կոշիկ շինել տալ ուղղը պէտք է
դիմէ Պ. Ստեփան Խօրատանճեանի ,
որուն ճարտարութիւնը մէկ վոր-
ձով երեւան կելլայ :

Գիտեր գիւրամատչելի :